Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Ս. Աթանեսյանին

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.***
   Մերի Հարությունյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
   Ռազմավարական քաղաքականության վարչության  գլխավոր մասնագետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Այցելություն Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք՝ 2023թ. հոկտեմբերի 12-ից 13-ը:

4. ***Հրավիրող կողմը***
   «Վերջ պլաստիկ աղտոտմանը» Բարձր հավակնության կոալիցիայի  թիմ

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն  «Վերջ պլաստիկ աղտոտմանը» Բարձր հավակնության կոալիցիայի փորձիգիտական խմբի հանդիպմանը

6. ***Քննարկված թեմաները, ելույթները և հանդիպումները***

2023թ. հոկտեմբերի 12-ից 13-ը տեղի ունեցած «Վերջ պլաստիկ աղտոտմանը» Բարձր հավակնության կոալիցիայի (Կոալիցիա) փորձիգիտական խմբի հանդիպման օրակարգում ներառված էին  հետևյալ հիմնական կետերը.

1. **Պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիքի զրոյական նախագծի (Նախագիծ) ներկայացում:**

*Տվյալ կետի շրջանակներում ՄԲԿ քարտուղարության ներկայացուցչի կողմից ներկայացվեց պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային գործընթացի շրջանակներում մշակված Նախագիծը, փաստաթղթի կառուցվածքը, բաժինները, հիմնական հոդվածները և կարգավորման առարկաները:*

2. **Նախագծի բաժինների քննարկում:**

*Տվյալ կետի շրջանակներում տեղի ունեցան խմբային քննարկումներ Նախագծի հետևյալ բաժինների վերաբերյալ.*

- *Պլաստիկ արտադրի մեջ օգտագործվող առաջնային պոլիմերներ,*
- *Քիմիական նյութեր և պոլիմերներ,*
- *Խնդրահարույց պլաստիկ՝ ներառյալ կարճաժամկետ և մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանք,*
- *Պլաստիկ արտադրանքի նախագծման առանձնահատկությունները,*
- *Պլաստիկ արտադրանքի նվազեցման ասպեկտները՝ այդ թվում պլաստիկ արտադրանքի վերաօգտագործման, ներանորոգման, վերամշակման առանձնահատկությունները,*
- *Վերամշակված պլաստիկի օգտագործումը,*
- *Արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգ,*
- *Պլաստիկ թափոնների կառավարում,*
- *Ֆինանսավորում,*
- *Կարողությունների զարգացում, տեխնիկական աջակցություն և տեխնոլոգիաների փոխանցում:*

*Օրակարգի տվյալ կետի շրջանակներում երկու զուգահեռ խմբերում տեղի են ունեցել մի շարք քննարկումներ, քննարկումներին ցուցաբերել եմ ակտիվ մասնակցություն:*

3. **ՄԲԿ 3-րդ նիստի օրակարգի ներկայացում և քննարկում,**

*Տվյալ կետի շրջանակներում ՄԲԿ քարտուղարության ներկայացուցչի կողմից ներկայացվեց ս/թ նոյեմբերի 13ից 19-ը Նայրոբիում կայանալիք ՄԲԿ 3-րդ նիստի օրակարգը, նիստի ընթացքում նախատեսվող հանդիպումների, միջոցառումների, ընթացակարգային հարցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:*

4. **Կոալիցիայի ընթացիկ և նախատեսվող աշխատանքների քննարկում:**

*Տվյալ կետի շրջանակներում Կոալիցայի ղեկավար թիմի կողմից ներկայացվեցին 2023թ.-ի ընթացքում իրականացված և նախատեսվող միջոցառումները, տեղի ունեցան քննարկումներ Կոալիցիայի հետագա գործունեությունը ավելի արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ: Քննարկումներին ցուցաբերել եմ ակտիվ մասնակցություն:*

Հանդիպման շրջանակներում հնարավորություն ունեցա ծանոթանալու նաև մի շարք երկրների կողմից իրականացված և նախատեսվող միջոցառումներին՝ ուղղված պլաստիկ աղտոտման հիմնախնդրի լուծմանը, ինչպես նաև ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի կողմից իրականացված և իրականացվելիք միջոցառումներին:

Հանդիպմանը մասնակցում էին 60-ից ավել մասնակիցներ տարբեր երկրներից (Վրաստան, Սլովակիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Նորվեգիա, Իսպանիա, Նիդեռլանդներ, Ուռուգվայ, Չիլի, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա, Մեքսիկա, և այլն):

7. ***Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը***

Հանդիպման շրջանակներում որոշումներ չեն ընդունվել: Պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիքի զրոյական նախագծի վերաբերյալ Կոալիցիայի անդամ երկրների փորձագետների կողմից

արված առաջարկությունները կամփոփվեն տվյալ հանդիպման հաշվետվության մեջ, իսկ Կոալիցիայի անդամ երկրների ներկայացուցիչների հերթական հանդիպումները կկազմակերպվեն ս/թ նոյեմբերին Նայրոբիում կայանալիք պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային կոմիտեի 3-րդ նիստի ընթացքում:

Ռազմավարական քաղաքականության վարչության
գլխավոր մասնագետ՝

Մ. Հարությունյան

16.10.2023թ.